Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-646[1]-19.06.2009-ՖՎ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 29-ի ՀՕ-359-Ն օրենքի 1-ին հոդվածում «շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց» բառերը փոխարինել «շուկայի մասնագիտացված մասնակիցների» բառերով, իսկ «ներդրումային ընկերությունների,» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների» բառերը փոխարինել «բանկերի և վարկային կազմակերպությունների» բառերով:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում՝
1. 1-ին մասի «դ» կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
«դ) թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել.
2. 1-ին մասի «ե» կետից հանել «, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական)» բառերը.
3. լրացնել 3.1 մաս հետևյալ բովանդակությամբ՝
«3.1. Վարկային կազմակերպություններին արգելվում է մատուցել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված ներդրումային կամ 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ոչ հիմնական ծառայությունները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի «դ» կետի: Կենտրոնական բանկը կարող է լրացուցիչ պահանջներ սահմանել վարկային կազմակերպությունների կողմից արժեթղթերով գործարքներ կատարելու համար:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված վարկային կազմակերպությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

««Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 1-ին ընթերցումից հետո ստացված դիտողությունների և առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Նախագծի վերաբերյալ առաջարկությունը	Եզրակացու-թյուն
1	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում առաջարկվում է «շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց» բառերը փոխարինել «շուկայի մասնագիտացված մասնակիցների» բառերով, իսկ «ներդրումային ընկերությունների» բառերը հանել:	Ընդունվել է:
2	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	1. Նախագծով վարկային կազմակերպությանը իրավունք վերապահել իրականացնելու ներդրումային ընկերության համար սահմանված գործունեության տեսակներից միայն մեկը՝ «իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել»-ը. 2. Օրենքների միջև հակասություններ չառաջանալու համար Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվում է լրացնել 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ «3. Լրացնել 3.1 մաս հետևյալ բովանդակությամբ՝ «3.1. Վարկային կազմակերպություններին արգելվում է մատուցել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված ներդրումային կամ 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ոչ հիմնական ծառայությունները, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի «դ» կետի:»: 3. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետից հանել «, պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական)» բառերը: 4. Հաշվի առնելով, որ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքից հանվում են վարկային կազմակերպությունները որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, որով էլ պայմանավորված նշված օրենքի կարգավորումները չեն տարածվելու վարկային կազմակերպությունների վրա, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում լրացվող 3.1 մասում նախատեսել, որ Կենտրոնական բանկը կարող է լրացուցիչ պահանջներ սահմանել վարկային կազմակերպությունների կողմից արժեթղթերով գործարքներ կատարելու համար:	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նոր ստեղծվող կազմակերպությունների և գործող կազմակերպությունների համար հավասար իրավական դաշտ ապահովելու համար առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածում ավելացնել անցումային դրույթ, որի համաձայն մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված ներդրումային ընկերությունները պարտավոր են սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:	Ընդունվել է: